# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## 26.03.2026թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Ստեփանավան «27» մարտի 2026թ.

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Գրիգորյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա(այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դի Օհմ Էներջի» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Սևակ Գևորգյանի, որը գործում է ՍՊԸ-ի՝ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, հիմք ընդունելով «Դի Օհմ Էներջի» ՍՊԸ-ի կողմից 27.03.2026թ.-ի գրությունը և 26.03.2026թ.-ին կնքված N ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն համաձայնագրով արևային ֆոտովոլտային համակարգի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների ՀՀ-ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 գնման պայմանագրի հավելված 1-ում նշված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվում է 15 օրացուցային օրով՝ վերջնաժամկետը սահմանելով մինչև 25.04.2026թ.:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, գրված է հայերեն լեզվով ՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ**
**ք.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**h/h900252101648**
**ՀՎՀՀ 06954104**
**Համայնքի ղեկավար՝ Ա. Գրիգորյան**

-----------------------------------
**(ստորագրություն)**

**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Դի Օհմ Էներջի» ՍՊԸ**
**ք.Երևան, Ալեք Մանուկյան 15Ա**
**«Ինեկոբանկ»ՓԲԸ**
**h/h2050022599141001**
**ՀՎՀՀ00152889**

-----------------------------------
**(ստորագրություն)**

**Կ.Տ.**